Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հաստատություն՝ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Վարդանյան Կարինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում_____4

Եզրակացութուն_____17

Գրականության ցանկ_____18

Ներածություն

Ընտանիքի դերը և ազդեցությունը երեխայի զարգացման , անհատականության ձևավորման և ողջ կյանքի վրա անժխտելի է: Ինչպես անժխտելի է այն, որ երեխայի առաջին դաստիարակը և ուսուցիչը նրա ծնողներն են, ովքեր պատասխանատու են այն միջավայրի համար, որտեղ մեծանում է իրենց երեխան:

Երեխայի զարգացման հարցում ընտանիքից հետո կարևոր գործառույթ է կատարում մանկապարտեզը, որը դառնալով գործընկեր , շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին:

Ուստի երեխայի անհատականության ձևավորման , ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու կարևոր օղակների համագործակցությունը:

Համագործակցության արդյունքում ծնողներն ավելի լավ կճանաչեն իրենց երեխաներին , որը և հիմք կդառնա համատեղ լուծելու երեխայի դաստիարակությանը և զարգացմանը նպաստող ամենատարբեր խնդիրները՝ հարստացնելով ընտանեկան դաստիարակության փորձը:

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Մեր երեխաները մեր՝ ծերությունն են: Ճիշտ դաաստիարակումը՝ դա մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակումը ՝ մեր ապագա վիշտն է, մեր արցունքները, մեր մեղքը ուրիշ մարդկանց հանդեպ , ողջ երկրի հանդեպ:

Երեխաները մեր ապագան են: Սա իրականության հանրահայտ ձևակերպումներից է: Ինչպիսի՞ն կլինի մեր ապագան.սա պայմանավորված է այն իրողությամբ, թե ինչպիսի երեխաներ կկրթենք ու կդաստիարակենք մենք:

Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնող-դաստիարակ օղակը:

Մեր հասարակությանն արժանի քաղաքացի դաստիարակելու նպատակով պետք է համագործակցեն ծնողները և դաստիարակները:Ծնողը և մանկապարտեզը նույն գետի երկու ափերն են,որոնք հոսում են նույն ուղղությամբ:

Անցել են այն ժամանակները, երբ ծնողը բավարարվում էր առավոտյան երեխային մանկապարտեզ բերելով և երեկոյան տուն տանելով: Իսկ թե երեխան ինչպե՞ս կդրսևորեր իրեն մանկապարտեզում , դիտվում էր միայն որպես դաստիարակի մտահոգության խնդիր:

Այլ են հիմա ժամանակները և պահանջները: Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին հանընթաց , լինի բանիմաց, անկաշկանդ, իմանա ու գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները:

Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա օգտագործելով իր բոլոր ընդունակությունները, ինչպես և վստահություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ:

Առանց ծնողների օգնությամբ և աջակցությամբ հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել:

Ծնողների հետ շփումն օգնում է դաստիարակին՝տեղյակ լինել , թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել նրա հոգեբանության , վարքի և տրամադրության վրա: Դա դաստիարակին թույլ է տալիս հասկանալ ու օգնել երեխային: Ընդ որում, այդ օգնության կարիքը զգում են ոչ միայն երեխաները , այլև ծնողները:

Ընտանիքը և մանկապարտեզը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են , որոնք ազդում են երեխայի վրա:

Ընտանիքները տարբեր են իրենց բնույթով կազմով և գործողությամբ : Մենք չենք կարող ակնկալել , որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի կրթությանը , դաստիարակությանը , խնամքին , հնարավորիս շատ ժամանակ կհատկացնեն նրանց և կաջակցեն ամեն փոքր հարցերում:

Դաստիարակը ով աշխատում է երեխաների հետ , պարտավոր է ծնողի հետ զրուցել , քննարկել այն բոլոր խնդիրների մասին , որոնք առնչվում են երեխաների հետ : Հնարավորություն տալ նրանց խոսել և տալ տարբեր գաղափարներ և տեղեկություններ , որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի հետ շփումը:

Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ կիրառի , լինի ստեղծագործ , ճկուն , բարեհամբույր , մեծահոգի , համբերատար , բանիմաց և հոգատար:

Ծնողի տեղեկացված լինելը երեխայի կատարած ցանկացած լավ և վատ արարքի մասին էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ : Եվ որպես գործընկեր ավելի միավորում նրանց և արդյունավետ դարձնում նրանց կատարած աշխատանքը:

Ծնողները պետք է ակտիվ մասնակցեն մանկապարտեզի գործընթացին:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները:

1.Ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին , նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:

2.Ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ , գնահատել նրա ձեռքբերումներն ու շտկել թերությունները:

3.Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:

4.Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Մանկապարտեզ և ընտանիք համագործակցության ձևերն են.

Զրույցները , խորհրդատվությունները , տնային այցելությունները , բաց դռների օրերը , ծնողական համաժողովները:

Դաստիարակը կապեր հաստատելով երեխայի ընտանիքի հետ՝լուծում է հետևյալ խնդիրները:

Ճանաչել երեխայի ընտանիքը:

Ուսումնասիրել երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա:

Օգնել ծնողներին՝ ընտանիքում ճիշտ և գրագեդ դաստիարակել երեխային:

Կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:

Չեզոքացնել ընտանիքի բացասական ազդեցությունը:

Այսպիսով ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է:

Անտարակույս , նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում:

Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ:

Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր , որոնք կնպաստեն ներգրավել , ուղղորդել , խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողությամբ:

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում , բայց հասարակություն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է մանկապարտեզը:

Մանկապարտեզի առօրյան ի տարբերություն ընտանեկան միջավայրին հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ , դառնալ ավելի ինքնուրույն:

Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է անհատական զարգացման տեմպով և իր ուրույն ոճով : Երեխաների անհատական առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն նրանց հետ հաղորդակցելիս և գործունեություն կազմակերպելիս:

Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը , մտածողությունը:

Երեխան սովորում է իրերին ձեռք տալով , դրանք գործածելով , փորձարկելով և շփվելով։

Մանկապարտեզը , պետք է ստեղծի միջավայր , որը պետք է նպաստի երեխայի զարգացմանը , դաստիարակը պետք է ստանձնի խաղընկերոջ դերը ։ Օրվա գործունեությունը պլանավորելիս պետք է դնել խթանող , երեխաներին խրախուսելի խաղեր ։ Դաստիարակը պետք է հետևի երեխաներին , որպեսզի հասկանա , թե ինչն է նրանց հասկանալի , ինչը անհասկանալի ։ Հիմնվելով դիտարկումների վրա , պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ , որոնք կխթանեն մտածողությունը ։ Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական , սոցիալական , հուզական և իմացական փոխկապակցվածությունն է։

Մի ոլորտի առաջընթացի զարգացումը ազդում է մյուս ոլորտների առաջընթացին։

Կարևորագույն նախապայմանը խախտված է , երբ շեշտը դնում է իմացական զարգացման վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը։

Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան , անհրաժեշտ է , որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ , համապատասխանի նրա զարգացման մակարդակին ։

Երբ երեխաները զգում են , որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ , ավելի հետևողական են կատարում առաջադրանքն և պատրաստ են լինում սովորելու ավելին։

Մանկական հոգեբանների մեծ մասը միակարծիքի է՝ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ , քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում։

Հայտնվելով մանկապարտեզում իրեն անծանոթ շրջապատում երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում ։

Եթե տանը նա սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ այն , ինչ ուզում է կամ իր ուզածին հասնել լացով կամ հիստերայով , ապա նոր միջավայրում նա ստիպված է հարմարվել և ուրիշների կարծիքը հաշվի առնել ։

Երեխայի էմոցիոնալ դաշտում , տեղի է ունենում փոփոխություններ ։ Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտերի հերոսներին , ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ , որտեղ ընկերները իրական են։

ԵԿԵՔ
ՇԻՆԵԼՔ
ՍՈՒՐԲ

ՀԱՅՐԻԿ
ԴՈՒ ԻՄ
ՄԵԿԱՐ ԵՄ
ԻՄ
ՊԻԱՆԿ ԵՄ
ՔԵԶ
ՀԱՅՐ
ՇԱՓ

ՔԵՑ
ՄԻՈՒՍ ԵՄ
ԱՄՊԻ
ՇԱՓ
ԴՈՒ
ՄԵԾԱՐ ԵՄ
ԻՄ
ՄԻԱԿՆ ԵՄ
ԱՆԳԻՆ
ՄԱՅՐԻԿ
ԴՈՒ ԻՄ
ՅԱՆՔ ԵՄ

ԵԿԵՔ
ՇԻՆԵՆՔ
ՍՈՒՐԲ

ԵԿԵՔ
ՇԻՆԵՆՔ
ՍՈՒՐԲ
ԽՈՐԱՆԸ

Մանկապարտեզը այն միջավայրն է , որտեղ փոքրիկը զբոսնում է , խաղում է , սնվում է օրվա հստակ ժամերին։

Ճիշտ սահմանված օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է ։

Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները , որոնք նա փորձում է ճշտությամբ կատարել։

Օրինակ ` դասավորել խաղալիքները , ինքնուրույն հագնվել , ճիշտ ժամանակին ավարտել աշխատանքը և այլն ։ Նման պարզ խնդիրները երեխայի մոտ զարգացնում են պատասխանատվությունը և ինքնուրույնությունը ։

GARFIELD

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը։Ո՞վ պետք է լինի դրա նախաձեռնողը անշուշտ մանկավարժները ։ Նրանք պետք է ստեղծեն ներդաշնակ , ամուր կապ ՝ ի շահ երեխայի դաստիարակության ։ Կարևոր է , որ ծնողները հասկանան ընտանիք մանկապարտեզ - երեխա փոխհարաբերությունը , զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը , գնահատեն նրա անձնային հատկանիշները ։ Այդ վստահությունը և հեղինակությունը հենց այնպես չի տրվում ։ Դա պետք է վաստակի մանկավարժը ։

Որպեսզի մանկապարտեզը բաց համակարգ լինի , անհրաժեշտ է կրթական գործընթացը հարստացնել ամենատարբեր ազդեցություններով ։ Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ , պետք է տեղաշարժել ավանդական հաղորդակցման(տոնակատարություններ , հավաքույթներ , ժողովներ և այլն) շրջանակը ։

Ծնողները և ընտանիքի մյուս անդամները կարող են նշանակալից կերպով ազդել երեխաների մանկապարտեզի կյանքի ռիթմի վրա կրթական գործընթացը ներառյալ ։ Օրինակ Սոնայի հայրը արտասահմանից նոր մուլտֆիլմեր և լուսանկարներ է բերել ։ Դրանց ցուցադրումը շատ հետաքրքիր կլինի երեխաներին ։ Կամ Դավիթի մորաքույրը նկարչուհի է , երեխաներին ցույց է տալիս իր նկարները , և նրանց առաջ բացվում է ստեղծագործական աշխարհի որոշ գաղտնիքներ ։ Նա միջոցառումների ժամանակ ձևավորում է խմբասենյակը , ցուցահանդեսին մասնակից դարձնում երեխաներին ։

Այսպես կարելի է համագործակցության շատ եզրեր գտնել գրքերի նորոգման , ստեղծագործական և այլ աշխատանքներում ։ Այս ամենը անհրաժեշտ է հենց երեխաներին ոչ միայն այն պատճառով , որ ինչ որ բան են սովորում , այլ հատկապես , որ ընկերները հիացմունքով են դիտում իրենց ծնողներին ։ Դա հպարտության զգացում է ծնում և կարող է խթան դառնալ շատ խնդիրների լուծման համար ։

Եզրակացություն

Այսպիսով , ուսումնասիրելով ,,Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում" համագործակցության տարբեր տիպի մոդելներ , եկա այն եզրահանգման , որ դաստիարակության և կրթության համար հիմնականում պատասխանատվություն է կրում ընտանիքը ։

Մանկապարտեզը լրացնում , լավագույն դեպքում օգնում է ծնողի սկսած աշխատանքը ստեղծելով առողջ , զարգացնող միջավայր երեխայի ներդաշնակ ձևավորման համար ։

Մանկապարտեզը պետք է սերտ համագործակցի ընտանիքի հետ , և հարաբերությունները պետք է լինեն բարեկամական - գործընկերային ։

Մանկապարտեզ - ընտանիք կապը պետք է հիմնված լինի փոխադարձ վստահության վրա ։

Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն ։

Ի վերջո երեխաների դաստիարակումը մեր կյանքի կարևոր բնագավառն է ։ Մեր երեխաները մեր երկրի ապագա քաղաքացիներն են և աշխարհի քաղաքացիներ ։

Նրանք պետք է ստեղծեն պատմություն։

Մեր երեխաները վաղվա հայրերն ու մայրերն են ։ Նրանք նույնպես իրենց երեխաների դաստիարակները պետք է լինեն ։ Մեր երեխաները պետք է դառնան հիանալի քաղաքացիներ , լավ հայրեր ու լավ մայրեր ։

Գրականության ցանկ

1. Նախադպրոցականի զարգացումը կրթահամալիրում. 2-6 տարեկաններ

2. Դաստիրակենք միասին (մանկապարտեզի և ընտանիքի համագործակցություն) Հովհաննիսյան Ասյա

3. ,, Պարտեզ " նախադպրոցական կրթական ծրագիր